ապայ կ'երթամ. եւ ոմանք ոչ թողին, եւ ի նեղութենէն ի ժամ ոչ գնաց, այլ Մարտիրոս վարդապետն գնացեալ և յարձակման ժամուն ասաց ժողովրդեանն թէ Ահա՛ որ զայս ծանուցաք ձեզ՝ թէ մեք զմեր քանն հոգամք եւ ցաւիմք. այսօր յԱստուածածին զայս աղմուկս են վերացուցեր. այս անէծքն այն անէծքն ի վերայ ով որ զայս աղմուկս կ'առնէ: Ժողովո՛ւրդք, խմացած լինիք, որ չարք ոմանք խորամանկութեամբ կ'առնեն զբանս՝ թէ բանն Երուսաղէմայ աւերի: Եւ ժողովուրդն աղաղակաւ ի դուրս ելին եւ այլք հրապուրեցին զժողովուրդն եւ գնացին խուռն ամբոխիւ յԱստուածածին եւ ըմբռնեալ զՄուղնեցին թէ կ'երթա՞ս թէ ոչ. եւ նա ասէ՝ երթամ: Եւ ոչ հաւանին ժողովուրդքն, այլ ասեն թէ ել և այժմ գնա՛յ. մինչև առաջի իւրեանց արկեալ յաւել քան զԲ ոգի եւ բերին ի Սուրբ Նիկողոս՝ թէ քէֆիլ գտանէ որ առաւօտուն երթայ. եւ զՅակոբն կալեալ գան հարին ի ճանապարհին թէ Ցորմէ հետէ մտար ի քաղաքս՝ աղմուկ ել եւ խռովութիւն. հազիւ խոյս տայ յանկիւնս խցերաց եկեղեցոյն: Եւ եկն Մուղնեցին թէ Եղիազարն լիցի քէֆիլ զի երթիցեմ առաւօտուն. եւ փակեալ Եղիազարն զդուռ խցին եւ ոչ թոյլ տայր մտանել առ իւր, այլ ի դուրս նստէր ի մեծ խուցն. և ամենեքեան յամբոխիցն մի մի բան ասէին նմա, և երեկոյանայր եւ ներս եւ դուրս լցեալ կային: Եւ արք ոմանք հաճեցեալ զմիտս ամբոխին թէ երթիցէ առաւօտին, դուք ցրուեցէք. բաւ է այսքան: Եւ ի գիշերին ել եւ գնաց ի Պալատ՝ Մուղնեցին:

Եւ առաւօտուս (Հ Փեբր.) եկեալ ժողովուրդքն նոյնպէս եւ ասէին. Ո՞ւր է նայ, երթիցէ այժմ. եւ Մարտիրոս վարդապետն կրկին ծանուցում արար թէ կու երթայ, մարդի՛ք, մեք զխօսք նորա առաք. մի՛ չատացուցանէք զաղմուկ: